


Ակնարկ հայկական հարթ տապանաբարերու արուեստին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍՆԱՆ

Բաղմադարեան հայ արուեստը, իր բաղմաթիւ երեսներով, մեր օրերուն հասած անսպառ դանձ մըն է: Ջայն պեղողները որքան ալ ըլլան կորովի, ու թիւով մեծ, դարձեալ, իւրաքանչիւր անոր մօտեցող նոր մասնադէտ կը գտնէ իր հետաքրքրութեան արժանի նիւթ մը, նոյն իսկ այն մարդէն ներս, ուրկէ անցած են բաղմաթիւ վաստակաւոր մշակներ, առանց սակայն դայն կարենալ սպառելու: Այդպէս եղաւ մեր հանդիպումը հայկական տապանաքարերու հետ, 1971 թրւին, երբ կ'այցելէինք Նորաթուղի միջնադարեան նշանաւոր դերեգմանատունը, որ իսկապէս «բացօղեայ թանգարան» մըն է իր խաչքարերով եւ արուեստի այլ գոհարներով: Այդ տապանաքարերու ուսումնասիրութեամբ զբաղած էին շատ մը մասնադէտներ, սկսած Գարեգին Յովսէփեանցէն մինչեւ Կարախանեան, սակայն այն քարերը, որոնք մեզ կը հետաքրքրէին, ամբողջութեամբ անտեսուած էին:

Նախաքրիստոնէական յուշարձան-մահարձան կոթողներէն ետք, ինչպիսիք են պաշտամունքային մանհիրները, Փալլիւսները, խաչքարանման կանդուն սեպագիր յուշարձանները, կը հասնինք քրիստոնէական առաջին շրջանի կանդուն, ուղղահայեաց կոթողներուն, մահարձաններուն (ինչպէս Աղութիի յուշարձանը), որոնք հետզհետէ անցնելով տարբեր փուլերէ, կը հանդին հորիզոնական ձեւին՝ բացի խաչքարէն: Ձեւ՝ որ լաւագոյնս կը համապատասխանէ քրիստոնէութեան կրաւորական ոգիին: Հարթ, եռանկիւն, կոր տապանաքարեր գոյութիւն ունին սկսած Դ. դարէն: Մեր ուսումնասիրութեան ընթացքին հանդիպեցանք աւելի քան երկու հարիւր տար-



Նկար թիւ 2



Նկար թիւ 1



Նկար Ք.Խ. 4



Նկար Ք.Խ. 3



Նկար ՔԻԼ 6




Նկար ՔԻԼ 5




Նկար. Բ-իւ. 8



Նկար. Բ-իւ. 7



Նկար Ք իւ 10



Նկար Ք իւ 9

բեր տեսակի տապանաքարերու, որոնք իրենց այլազանութեամբ եւ արուեստի իւրայատուկ ոճով կրնան անթիւ գիտաշխատողներու նիւթ հայթայթել:

Մենք դո՛հացանք անոնցմէ միայն մէկ տեսակի ուսումնասիրութեամբ, եւ սկսանք շրջիլ Խորհ. Հայաստանի զանազան դաւառներն ու բնակավայրերը՝ նիւթերու հաւաքման համար: Վերոյիշեալ տապանաքարերը մեծ մասամբ հին դերեզմանատուններու մէջ են, եկեղեցիներու շուրջը, կամ՝ իշխանական դամբարաններու մէջ: Իրենց հարթ մակերեսին վրայ կը կրեն փորագրուած կամ շատ թեթեւ քանդակուած մարդկային կերպարներ: Սկզբնական շրջանի քարերուն վրայ կը հանդիպինք կարկինով գծուած շրջանակի մը՝ դլուխը, որուն երկու կողմերը կան հորիզոնական գիծեր՝ ուսերը, որոնք կը հասնին քարի ծայրամասին գտնուող շրջանակ-երիզին: Աւելի ուշ, նոյն ձևերու վրայ կ'աւելնան ձեռքերն ու ոտքերը, երբեմն նախնական ձևով գծուած: Ապա կը հանդիպինք այնպիսի քարերու, որոնց վրայ կարելի է տեսնել հազուստին ձեւը, գլխուն թաղը (եթէ իրական սեռի կը պատկանի), մօրուքը կամ փափախը (եթէ արական սեռի կը պատկանի), եւ կամ՝ տուեալ անձի արհեստին վերաբերող դործիքներ: Սակայն, հոն, ուր մարդկային կերպարը կը ներկայանայ իր աչքերով, կուրծքին՝ խաչաձեւուած ձեռքերով, մարմինը խորհրդանշող տարածութիւնէն ետք սկսող ոճաւորեալ ոտքերով, մենք արդէն դործ ունինք արուեստի բարձր մակարդակի մը հետ: Արուեստ՝ որ կ'անցնի մահուան բովէն, խորհրդապատկերներով հարստացած, ու իր ձեւին կու տայ խորունկ արտայայտչականութիւն: Կերպարներու այլակերպումը կը պատշաճի կեանքէն մահ անցումի խորհուրդին, ձգտելով նոյն ատեն բացատրել հոգեւոր իմացականութեան բնականացումը:

Ինչ որ ամենէն աւելի այժմէական կը դարձնէ հարթ տապանաքարերու արուեստը, անկասկած արդի ժամանակներու սեւեռած ուշադրութիւնն է մարդկային դիմադիծին եւ անոր ողբերգական արտայայտչականութեան: Միրոյի, Փեքասոյի, Գլէի, Տիւ-Պիւֆէի եւ տակաւին ամբողջ «նէս-Ֆիլիւրաթիւ» նկարիչներու կատարած փրկարարութիւնները մարդկային դիմադիծի արտայայտութիւնը աւելի հեռու չեն տարած, քան միջնադարու անանուն հայ վարպետները:

Հետագային աւելի հանդամանօրէն պիտի անդրադառնանք հարցին, բաղդատութիւններ կատարելով: Այժմ կը դո՛հանանք լոկ արուեստատէրին ուշադրութիւնը հրաւիրելով հայ արուեստի անձանօթ բայց ցնցիչ մէկ բնագաւառին՝ հարթ տապանաքարերու արուեստին:

ՆԿԱՐՆԵՐՈՒ ԾԱՆԿ

- Նկար թիւ 1. Նախնական ոճով նորածինի տապանաքար: Օշականի Հին գերեզմանատուն:
- Նկար թիւ 2. Երկրաչափական ոճով տապանաքար: Օշականի Հին գերեզմանատուն:
- Նկար թիւ 3. Տապանաքար՝ գլխուն վերեւ իմաստութեան խորհրդանիշ եղջիւրներով: ԺԳ-ԺԴ. ? դար: Նորաթուզի (Կամոյի շրջան) միջնադարու գերեզմանատուն:
- Նկար թիւ 4. Կոյսի կամ նորահարսի տապանաքար, գլխուն՝ թաղով: ԺԳ-ԺԴ. ? դար: Նորաթուզի (Կամոյի շրջան) միջնադարու գերեզմանատուն:
- Նկար թիւ 5. Մօրուսաւոր Հովիւի տապանաքար: ԺԵ. ? դար: Նորաթուզի (Կամոյի շրջան) միջնադարու տապանաքար:
- Նկար թիւ 6. Նկար թիւ 5-ի մանրամաս:
- Նկար թիւ 7. Խորհրդապաշտական տապանաքար: ԺԶ. ? դար: Վերիչէն (Ձանդեզուր, Գորիս) գիւղի գերեզմանատուն:
- Նկար թիւ 8. Վզնոցով ու գլխաշորով կնոջ տապանաքար: ԺԷ. ? դար: Նորաթուզի (Կամոյի շրջան) միջնադարու գերեզմանատուն:
- Նկար թիւ 9. Նախնական ոճով տապանաքար: ԺԷ-ԺԸ. ? դար: Եղեգիս (Եղեգնաձորի շրջան, Վայոց Ձոր) գիւղի գերեզմանատուն:
- Նկար թիւ 10. Նկար թիւ 9-ի մանրամաս:

THE ART OF ARMENIAN PLAIN-TOMBSTONES

HAROUTUNE TOROSSIAN

(Summary)

The human figurative designs, found on the Armenian plain-tombstones may open a new page in the history of Armenian art. These belong to the 13-17th centuries and are found in the medieval graveyards, in the courtyards of ancient churches, in the charnel-houses of medieval feudal princes, located in Soviet Armenia.

The pictures of the tombstones in the article are photographed by the author, and are published for the first time.